# ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
# ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N << ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-20/55-1>>

ք. Երևան

« 30 » «հոկտեմբեր» 2020 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է.Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և ՂԱԶԱՐՅԱՆՇԻՆ ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Ղազարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Երևան քաղաքում նոր կոյուղագծերի կառուցման և գործող ցանցերի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման տրամադրման աշխատանքների** (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ նախագծողը՝

1) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմում է օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

Digitally signed by GHAZARYAN VALERIK 2609800436
Date: 2022.07.31 10:02:55 AMT

2) ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնում է աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

### 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 5940000 (հինգ միլիոն ինը հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 **(մեկ)** չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի **0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական)** տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք

հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի
գնի արհեստական փոփոխման:
Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր
դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը
լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել
աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան
պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5
օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող
է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն
է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու)
օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:
Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի
կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են
պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա:
Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները
կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար
պատասխանատու է Կատարողը:
7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման
հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի
Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ
ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների
մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք
բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման
համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:
7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու
հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն
հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի
լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը
միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված
հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին
ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային
փոստին:7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:
Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:
7.13 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր
իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի
անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:
7.14 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ
օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևանի քաղաքապետարանի կոմունալ տնտեսության
վարչության աշխատակազմը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | ՂԱԶԱՐՅԱՆՇԻՆ ՍՊԸ |
| ք. Երևան, Արգիշտիի փ. 1 | Հասցե ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, 5-րդ միկրո թղմ., 16/5 շ |
| Կենտրոնական գանձապետարան | Բանկը «Կոնվերսբանկ» ՓԲԸ |
| ՀՀ 900012410032 | Հ/Հ 19300980511300 |
| ՀՎՀՀ 02593108 | ՀՎՀՀ 08621867 |
| Է.Կիրակոսյան ________ (ստորագրություն) Կ.Տ. | Ա. Ղազարյան ________ (ստորագրություն) Կ.Տ. |

Հավելված N 1
« 30 » «հոկտեմբեր» 2020 թ. կնքված
ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-20/55-1 ծածկագրով պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

**Երևանի քաղաքապետարանի կարիքների համար նոր կոյուղագծերի /հեղեղատարների/ կառուցման և գործող ցանցերի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և տրամադրման աշխատանքների ձեռքբերման**

ՀՀ դրամ

| Հ/Հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | | տեխնիկական բնութագիրը | Չ/Մ | ընդհանուր գինը | ընդհանուր քանակը | մատակարարման | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | Աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն | Ժամկետը |
| 8 | 71241200/457 | | **Նորք-Մարաշ վարչական շրջանում <u>նոր հեղեղատարի</u> կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման տրամադրման աշխատանքներ** | | | | | Պայմանագիրը կնքելու օրվանից՝ 47-րդ օրացուցային օրը ներառյալ |
| | | 1 | Այգեգործական փողոցից դեպի Նորքի 1-ին փողոց **/վերակառուցում** / — մոտավոր 420 մետր | դրամ | 900000 | 1 | կառուցում | |
| 11 | 71241200/460 | | **Շենգավիթ վարչական շրջանում <u>նոր կոյուղագծի կառուցման</u> նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման տրամադրման աշխատանքներ** | | | | | Պայմանագիրը կնքելու օրվանից՝ 47-րդ օրացուցային օրը ներառյալ |
| | | | Ն. Զարբախ հհ.11,12, 13, 14, 15, 16 փողոցներ /**կոյուղագիծ**/– 3000 գծմ /մոտավոր/ | դրամ | 3600000 | 1 | կառուցում | |
| 12 | 71241200/461 | | **Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում <u>կոյուղագծի վերակառուցման</u> նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման տրամադրման աշխատանքներ** | | | | | Պայմանագիրը կնքելու օրվանից՝ 47-րդ օրացուցային օրը ներառյալ |
| | | 1 | Մ. Ավետիսյան 4-րդ փողոց /1-13 տներ/և Լեփսիուսի փողոց 2-4 տներ **/կոյուղագիծ/**– 600 գծմ /մոտավոր/ | դրամ | 1440000 | 1 | վերակառուցում | |

**Տեխնիկական առաջադրանք յուրաքանչյուր չափաբաժնի համար**

1. Ուսումնասիրել տվյալ չափաբաժնում նշված հասցեներից մինչև վերջնական միացման կետի զարգացման հեռանկարը, այնուհետև միայն կազմել և ներկայացնել նախագիծը,
2. Համագործակցելով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ, ճշտել աբոնենտների քանակը և կոյուղատարի /հեղեղատարերի, խմելու ջրի ներքին ցանցի/ անհրաժեշտ հզորությունը,
3. Միացման կետերի տեխնիկական պայմանները «Վիոլիա Ջուր» ՓԲԸ-ց ստանալու է Պատվիրատուն: Այսինքն, պայմանագիր կնքելուց հետո պայմանագրի կողմը համագործակցելով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ, ճշտում է աբոնենտների քանակը և կոյուղատարի /հեղեղատարերի, խմելու ջրի ներքին ցանցի/ անհրաժեշտ հզորությունը և Պատվիրատուին է ներկայացնում համապատասխան տեղեկանք, որտեղ զետեղված կլինի բոլոր այն անհրաժեշտ տեղեկատվությունը, ինչը անհրաժեշտ է Պատվիրատուին «Վիոլիա Ջուր» ՓԲԸ-ին դիմելու և համապատասխան տեխնիկական պայման ստանալու համար:
4. Նախատեսել կոյուղատարի /հեղեղատարերի, խմելու ջրի ներքին ցանցի / կառուցումը,
5. Ներկայացնել մանրամասնորեն կատարված ուսումնասիրությունների արդյունքում հիմնավորված աշխատանքային ծավալները,
6. Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն,
7. Նախագիծը ներկայացնել 7 օրինակից և էլեկտրոնային կրիչով,
8. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության հետ;
9. Ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները;
10. Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող նվազագույն պահանջները:
11. Նախագծանախահաշվային փաստաթղթերը ներկայացվում են նաև ռուսերեն լեզվով,

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | ՂԱԶԱՐՅԱՆՇԻՆ ՍՊԸ |
| ք. Երևան, Արգիշտիի փ. 1 | Հասցե ՀՀ, Գեղարքունիքի մարզ, |
| Կենտրոնական գանձապետարան | ք. Սևան, 5-րդ միկրո թղմ., 16/5 2 |
| ՀՀ 900012410032 | Բանկը «Կոնվերսբանկ» ՓԲԸ |
| ՀՎՀՀ 02593108 | Հ/Հ 19300980511300 |
| | ՀՎՀՀ 08621867 |
| Է.Կիրակոսյան ______ (ստորագրություն) Կ.Տ | Ա. Ղազարյան ______ (ստորագրություն) Կ.Տ. |

Հավելված N 2
« 30 » «հոկտեմբեր» 2020 թ. կնքված
ԵՔ-ԳՀԽԱԾՁԲ-20/55-1 ծածկագրով պայմանագրի

# ՎճԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

<< դրամ

| Աշխատանքի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | |
| | | | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 8 | 71241200/457 | Նորք-Մարաշ վարչական շրջանում նոր հեղեղատարի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման տրամադրման աշխատանքներ | 900000 | 900000 | 900000 | 900000 |
| 11 | 71241200/460 | Շենգավիթ վարչական շրջանում նոր կոյուղագծի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման տրամադրման աշխատանքներ | 3600000 | 3600000 | 3600000 | 3600000 |
| 12 | 71241200/461 | Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում կոյուղագծի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման տրամադրման աշխատանքներ | 1440000 | 1440000 | 1440000 | 1440000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900012410032
ՀՎՀՀ 02593108

Է.Կիրակոսյան ____________
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

ՂԱԶԱՐՅԱՆՇԻՆ ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ,
ք. Սևան, 5-րդ միկրո թղմ., 16/5 2
Բանկը՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930098051130 0
ՀՎՀՀ 08621867

Ա.Ղազարյան ____________
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
«   »   20  թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
______________________
______________________
գտնվելու վայրը ______________
հհ ______________________
հվհհ ______________________

Պատվիրատու
______________________
______________________
գտնվելու վայրը ______________
հհ ______________________
հվհհ ______________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«   » «        » 20   թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ ________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «   »   «      » 20   թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | Կատարված աշխատանքների քանակական ցուցանիշը | | Կատարված աշխատանքների կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3
30 հոկտեմբեր 2020թ. կնքված
ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-20/55-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
ՂԱԶԱՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ,
ք. Սևան, 5-րդ միկրո թղմ., 16/5 շ
Բանկը՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 19300980511300
ՀՎՀՀ 08621867

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900012410032
ՀՎՀՀ 02593108

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« 18 » « դեկտեմբերի » 2020թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար նոր կոյուղագծերի /հեղեղատարների/ կառուցման և գործող ցանցերի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և տրամադրման աշխատանքներ

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «30» «հոկտեմբերի» 2020 թ.

Պայմանագրի համարը՝ ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-20/55-1

Պատվիրատուն՝ ի դեմս Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետ Ա.Կարոյանի և Պայմանագրի կողմը՝ ի դեմս «ՂԱԶԱՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ տնօրեն Ա.Ղազարյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «18» « դեկտեմբերի» 2020թ. դուրս գրված NԲ3266971494 հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1 | Նորք –Մարաշ վարչական շրջանում նոր հեղեղատարի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման տրամադրման աշխատանքներ | Այգեգործական փողոցից դեպի Նորքի 1-ին փողոց /վերակառուցում/ | 1 | 1 | 30.10.2020թ.-16.12.2020թ.. | 30.10.2020թ.-18.12.2020թ. | 900.0 | 2020թ. |
| 2 | Շենգավիթ վարչական շրջանում նոր կոյուղագծի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման տրամադրման աշխատանքներ | Ն. Չարբախ հհ. 11,12,13,14,15,16 փողոցներ /կոյուղագիծ/ | 1 | 1 | 30.10.2020թ.-16.12.2020թ.. | 30.10.2020թ.-18.12.2020թ. | 3600.0 | 2020թ. |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում կոյուղագծի վորակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման տրամադրման աշխատանքներ | Մ. Ավետիսյան 4-րդ փողոց /1-13 տներ/ և Լեփսիուսի փողոց 2-4 տներ /կոյուղագիծ/ | 1 | 1 | 30.10.2020թ.-16.12.2020թ.. | 30.10.2020թ.-18.12.2020թ. | 1440.0 | 2020թ. |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_ ______________
ստորագրություն
Ա.Ղազարյան
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

________________________
ստորագրություն

Ա.Կարոյան
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3,1
30 հոկտեմբեր 2020թ. կնքված
ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-20/55-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N 1
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետ Ա.Կարոյանի (այսուհետ` Պատվիրատու) և Պայմանագրի կողմը` ի դեմս «ՂԱԶԱՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ տնօրեն Ա.Ղազարյանի(այսուհետ` Կատարող) միջև 2020թ. հոկտեմբերի 30-ին կնքված N«ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-20/55-1» գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2020թ. դեկտեմբերի 18-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| Նորք –Մարաշ վարչական շրջանում նոր հեղեղատարի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման տրամադրման աշխատանքներ | հատ | 1 |
| Շենգավիթ վարչական շրջանում նոր կոյուղագծի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման տրամադրման աշխատանքներ | հատ | 1 |
| Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում կոյուղագծի վորակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման տրամադրման աշխատանքներ | հատ | 1 |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

Ա.Ղազարյան
ազգանուն, անուն

_________________________
ստորագրություն
Կ.Տ.

«ՂԱԶԱՐՅԱՆ ՇԻՆ» "КАЗАРЯН ШИН" "GHAZARYAN SHIN" 08621867

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

Ա.Կարոյան
ազգանուն, անուն

_________________________
ստորագրություն
Կ.Տ.

Հավելված
ՀՀ ֆինանսների նախարարի
2017թվականի մայիսի 20-ի 228-Ն հրամանի

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պայմանագրի անվանումը՝ Երևանի քաղաքում նոր կոյուղագծերի կառուցման և գործող ցանցերի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և տրամադրման աշխատանքներ

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ 30.10.2020թ.

Պայմանագրի համարը՝ ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-20/55-1

Պատվիրատուի անվանումը՝ Երևանի քաղաքապետարան

Պայմանագրի կողմի անվանումը «Ղազարյանշին» ՍՊԸ

Նշումներ անհամապատասխանությունների մասին՝

| N | Կատարված աշխատանքի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի |
| 1 | Նորք-Մարաշ վարչական շրջանում նոր հեղեղատարի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման տրամադրման աշխատանքներ | Այգեգործական փողոցից դեպի Նորքի 1-ին փողոց /վերակառուցում/ | 1 | 1 | 30.10.2020թ. - 16.12.2020թ. | 30.10.2020թ. - 18.12.2020թ. |
| 2 | Շենգավիթ վարչական շրջանում նոր կոյուղագծերի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման տրամադրման աշխատանքներ | Ն. Չարբախ հհ.11,12, 13, 14, 15, 16 փողոցներ /կոյուղագիծ/ | 1 | 1 | 30.10.2020թ. - 16.12.2020թ. | 30.10.2020թ. - 18.12.2020թ. |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3 | Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում կոյուղագծի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման տրամադրման աշխատանքներ | Մ. Ավետիսյան 4-րդ փողոց /1-13 տներ/ և Լեփսիուսի փողոց 2-4 տներ /**կոյուղատար**/ | 1 | 1 | 30.10.2020թ.- 16.12.2020թ. | 30.10.2020թ.- 18.12.2020թ. |

Հիմք ընդունելով վերոգրյալը, տալիս եմ դրական եզրակացություն:

Գնման հայտը նախագծած ներկայացուցիչ՝ _______________ Հ.Երգենյան

21.12.2020թ.

# ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
# ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N «ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-20/19-1»

ք. Երևան

«04» սեպտեմբեր 2020 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՂԱԶԱՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Ղազարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **նոր կոյուղագծերի կառուցման և գործող ցանցերի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարումը** (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ նախագծողը՝

1) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմում է օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնում է աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն և ռուսերեն լեզուներով թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

**3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործընթացի իրականացման ձեռնարկը տեղադրված է

«էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված <u>20</u> աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **6585000 (վեց միլիոն հինգ հարյուր ութսունհինգ հազար)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի **1 (մեկ)** տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի **0.1 (զրո ամբողջ մեկ տասնորդական)** տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի **0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական)** տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն

պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Սույն պայմանագրով նախատեսված պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է **Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչությունը**:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | «ՂԱԶԱՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ |
| ք. Երևան, Արգիշտիի փ. 1 | Հասցե ՀՀ, Գեղարքունիքի մարզ, |
| Կենտրոնական գանձապետարան | ք. Սևան,5-րդ միկրո թղմ., 16/5 շ |
| ՀՀ 900012410032 | Բանկը «Կոնվերսբանկ» ՓԲԸ |
| ՀՎՀՀ 02593108 | Հ/Հ 19300980511300 |
| | ՀՎՀՀ 08621867 |
| Է.Կիրակոսյան ---------------------- | Ա. Ղազարյան---------------------- |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ. |

Հավելված N 1
«04» «սեպտեմբեր» [redacted]2020 թ. կնքված
ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-20/19-1 ծածկագր[redacted]վ պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

**Երևանի քաղաքապետարանի կարիքների համար նոր կոյուղագծերի /հեղեղատարների/ կառուցման և գործող ցանցերի վերակառու[redacted]ման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և տրամադրման աշխատանքների ձեռքբերման**

ՀՀ դրամ

| Չ/Հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | | տեխնիկական բնութագիրը | Չ/Մ | Ընդհանուր գինը | ընդհանուր քանակը | կատարման | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | Աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն | ժամկե[redacted]ը |
| 1 | 71241200/239 | | **Աջափնյակ վարչական շրջանում կոյուղագծերի <u>վերակառուցման</u> նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման տրամադրման աշխատանքներ** | | | | | Պայմանագիր[redacted] ուժի մեջ մտնելու օրվա[redacted]ից՝ 90-րդ օրացուցայ[redacted]ն օրը ներառյ[redacted]ալ |
| | | 1 | Հակոբյանց փողոցից Խ. Խաչատրյան 2-րդ նրբ. **/կոյուղագիծ/**– 300 գծմ */մոտավոր/* | *դրամ* | *930000* | *1* | վերակառուցում | |
| | | 2 | Էստոնական 6 շենք **/կոյուղագիծ/**– 110 գծմ */մոտավոր/* | | | | վերակառուցում | |
| | | 3 | 16 թաղ. 23-26 շենքեր **/կոյուղագիծ/**– 210 գծմ */մոտավոր/* | | | | վերակառուցում | |
| 3 | 71241200/241 | | **Էրեբունի վարչական շրջանում <u>նոր կոյուղագծերի, հեղեղատարերի կառուցման և գործող ցանցի վերակառուցման</u> նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման տրամադրման աշխատանքներ** | | | | | Պայմանագիր[redacted] ուժի մեջ մտնելու օրվա[redacted]ից՝ 90-րդ օրացուցայ[redacted]ն օրը ներառյ[redacted]ալ |
| | | 1 | Նոր Արեշի 33-րդ փող. **/կոյուղագիծ/**- 170 գծմ */մոտավոր/* | *դրամ* | *960000* | *1* | կառուցում | |
| | | 2 | Նոր Արեշի 34-րդ փող. **/հեղեղատար/** - 250 գծմ */մոտավոր/* | | | | կառուցում | |
| | | 3 | Ավանեսով 3-րդ նրբ. /հ. 160 դպրոց/ **/հեղեղատար/** - 220 գծմ */մոտավոր/* | | | | վերակառուցում | |
| 4 | 71241200/242 | | **Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում <u>նոր կոյուղագծերի</u> կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման տրամադրման աշխատանքներ** | | | | | Պայմանագիր[redacted] ուժի մեջ մտնելու օրվա[redacted]ից՝ 90-րդ օրացուցայ[redacted]ն օրը ներառյ[redacted]ալ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 | Ծերենցի 2-րդ նրբ. 19-27 տներ **/կոյուղագիծ/** - 220 գծմ */մոտավոր/* | դրամ | 1140000 | 1 | կառուցում | |
| | | 2 | Ջիվանու փող. 20-54 առանձնատների համար **/կոյուղագիծ/**- 350 գծմ */մոտավոր/* | | | | կառուցում | |
| **5** | 71241200/243 | | **Շենգավիթ վարչական շրջանում <u>նոր կոյուղագծի կառուցման և գործող ցանցի վերակառուցման</u> նախագծանախահաշվային փաստաթղթերի կազման տրամադրման աշխատանքներ** | | | | | **Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից` 47-րդ օրացուցային օրը ներառյալ** |
| | | 1 | Ֆրունզե փողոց /սեփական առանձնատներ/ **/կոյուղագիծ/** - 250 գծմ */մոտավոր/* | դրամ | 1830000 | 1 | վերակառուցում | |
| | | 2 | Նորագավիթ 13-րդ և 14-րդ փողոցներ **/կոյուղագիծ/** - 370 գծմ */մոտավոր/* | | | | կառուցում | |
| | | 3 | Շիրակի փողոցի 5-րդ նրբ. **/հեղեղատար/** - 600 գծմ */մոտավոր/* | | | | կառուցում | |
| **6** | 71241200/244 | | **Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում <u>նոր կոյուղագծի, հեղեղատարի կառուցման և գործող ցանցի վերակառուցման</u> նախագծանախահաշվային փաստաթղթերի կազման տրամադրման աշխատանքներ** | | | | | **Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից` 90-րդ օրացուցային օրը ներառյալ** |
| | | 1 | Սարկավագի փողոց վերջնամաս Հասրաթյան փող. 80տ. Դիմացից մինչև Միքայելյան հիվանդանոց **/կոյուղատար, հեղեղատար/** – 550/400 գծմ */մոտավոր/* | դրամ | 1725000 | 1 | կառուցում | |
| | | 2 | Լեփսիուսի փողոց հհ27,37,39 **/կոյուղատար/** - 200 գծմ */մոտավոր/* | | | | վերակառուցում | |

**Տեխնիկական առաջադրանք յուրաքանչյուր չափաբաժնի համար**

**1.** Ուսումնասիրել տվյալ չափաբաժնում նշված հասցեներից մինչև վերջնական միացման կետի զարգացման հեռանկարը, այնուհետև միայն կազմել և ներկայացնել նախագիծը,
**2.** Համագործակցելով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ, ճշտել աբոնենտների քանակը և կոյուղատարի /հեղեղատարերի, խմելու ջրի ներքին ցանցի/ անհրաժեշտ հզորությունը,
**3.** Միացման կետերի տեխնիկական պայմանները «Վիոլիա Ջուր» ՓԲԸ-ց ստանալու է Պատվիրատուն:
Այսինքն, պայմանագիր կնքելուց հետո պայմանագրի կողմը համագործակցելով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ, ճշտում է աբոնենտների քանակը և կոյուղատարի /հեղեղատարերի, խմելու ջրի ներքին ցանցի/ անհրաժեշտ հզորությունը և Պատվիրատուին է ներկայացնում համապատասխան տեղեկանք, որտեղ զետեղված կլինի բոլոր այն անհրաժեշտ տեղեկատվությունը, ինչը անհրաժեշտ է Պատվիրատուին «Վիոլիա Ջուր» ՓԲԸ-ին դիմելու և համապատասխան տեխնիկական պայման ստանալու համար:
**4.** Նախատեսել կոյուղատարի /հեղեղատարերի, խմելու ջրի ներքին ցանցի / կառուցումը,
**5.** Ներկայացնել մանրամասնորեն կատարված ուսումնասիրությունների արդյունքում հիմնավորված աշխատանքային ծավալները,
**6.** Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն,

7. Նախագիծը ներկայացնել 7 օրինակից և էլեկտրոնային կրիչով,
8. Նախագծա–նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության հետ;
9. Ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները;
10. Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները;
11. Նախագծանախահաշվային փաստաթղթերը ներկայացվում են նաև ռուսերեն լեզվով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900012410032
ՀՎՀՀ 02593108

Է.Կիրակոսյան ————————
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՂԱԶԱՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ,
ք. Սևան,5-րդ միկրո թղմ., 16/5 շ
Բանկը՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930098051130О
ՀՎՀՀ 08621867

Ա. Ղազարյան————————
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
« 04 » «սեպտեմբեր» 2020 թ. կնքված
ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-20/19-1 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1,3,4,5,6 | 71241200/239 71241200/241 71241200/242 71241200/243 71241200/244 | նոր կոյուղագծերի կառուցման և գործող ցանցերի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ | - | - | - | - | - | - | - | - | 6585000 | 6585000 | 6585000 | 6585000 | 6585000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900012410032
ՀՎՀՀ 02593108

Է.Կիրակոսյան ---------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՂԱԶԱՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ,
ք. Սևան,5-րդ միկրո թղմ., 16/5 շ
Բանկը՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 19300980511300
ՀՎՀՀ 08621867

Ա. Ղազարյան ---------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
04 սեպտեմբեր 2020թ. կնքված
ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-20/19-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
ՂԱԶԱՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ,
ք. Սևան, 5-րդ միկրո թղմ., 16/5 շ
Բանկը՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 19300980511300
ՀՎՀՀ 08621867

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900012410032
ՀՎՀՀ 02593108

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« 02 » « դեկտեմբերի » 2020թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար նոր կոյուղագծերի /հեղեղատարների/ կառուցման և գործող ցանցերի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և տրամադրման աշխատանքներ
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «04» «սեպտեմբերի» 2020 թ.
Պայմանագրի համարը՝ ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-20/19-1
Պատվիրատուն՝ ի դեմս Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետ Ա.Կարոյանի և Պայմանագրի կողմը՝ ի դեմս «ՂԱԶԱՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ տնօրեն Ա.Ղազարյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «02» « դեկտեմբերի» 2020թ. դուրս գրված NԲ7073913186 հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1 | Աջափնյակ վարչական շրջանում կոյուղագծերի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման տրամադրման աշխատանքներ | Հակոբյանց փողոցից Խ. Խաչատրյան 2-րդ նրբ. /կոյուղագիծ/, Էստոնական 6 շենք /կոյուղագիծ, 16 թաղ. 23-26 շենքեր /կոյուղագիծ/– | 1 | 1 | 04.09.2020թ.- 03.12.2020թ.. | 04.09.2020թ.- 02.12.2020թ. | 930.0 | 25.12 2020թ. |
| 2 | Էրեբունի վարչական շրջանում նոր կոյուղագծերի, հեղեղատարների կառուցման և գործող ցանցի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման տրամադրման աշխատանքներ | Նոր Արեշի 33-րդ փող. /կոյուղագիծ, Նոր Արեշի 34-րդ փող. /հեղեղատար/, Ավանեսով 3-րդ նրբ. /հ. 160 դպրոց/ /հեղեղատար/ | 1 | 1 | 04.09.2020թ.- 03.12.2020թ.. | 04.09.2020թ.- 02.12.2020թ. | 960.0 | 25.12 2020թ. |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում նոր կոյուղագծերի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման տրամադրման աշխատանքներ | Ծերենցի 2-րդ նրբ. 19-27 տներ /կոյուղագիծ/, Ջիվանու փող. 20-54 առանձնատների համար /կոյուղագիծ/ | 1 | 1 | 04.09.2020թ.-03.12.2020թ.. | 04.09.2020թ.-02.12.2020թ. | 1140.0 | 25.12 2020թ. |
| 4 | Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում նոր կոյուղագծի, հեղեղատարի կառուցման և գործող ցանցի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման տրամադրման աշխատանքներ | Սարկավագի փողոց վերջնամաս Հասրաթյան փող. 80տ. Դիմացից մինչև Միքայելյան հիվանդանոց /կոյուղատար, հեղեղատար/, Լեփսիուսի փողոց hh27,37,39 /կոյուղատար | 1 | 1 | 04.09.2020թ.-03.12.2020թ.... | 04.09.2020թ.-02.12.2020թ. | 1725.0 | 25.12 2020թ. |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

______________
ստորագրություն
Ա.Ղազարյան
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

______________
ստորագրություն
Ա.Կարոյան
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված
ՀՀ ֆինանսների նախարարի
2017թվականի մայիսի 20-ի 228-Ն հրամանի

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Պայմանագրի անվանումը՝** Երևանի քաղաքապետարանի կարիքների համար նոր կոյուղագծերի/հեղեղատարների/ կառուցման և գործող ցանցերի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և տրամադրման աշխատանքներ

**Պայմանագրի կնքման ամսաթիվը՝** 04.09.2020թ.

**Պայմանագրի համարը՝** ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-20/19-1

**Պատվիրատուի անվանումը՝** Երևանի քաղաքապետարան

**Նշումներ անհամապատասխանությունների մասին՝**

| N | Կատարված աշխատանքի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի |
| 1 | Աջափնյակ վարչական շրջանում կոյուղագծերի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման տրամադրման աշխատանքներ | Հալաբյանց փողոցից Խ. Խաչատրյան 2-րդ նրբ. /կոյուղագիծ/, Էստոնական 6 շենք /կոյուղագիծ, 16 թաղ. 23-26 շենքեր /կոյուղագիծ/– | 1 | 1 | 04.09.2020թ. - 03.12.2020թ.. | 04.09.2020թ. - 02.12.2020թ. |
| 2 | Էրեբունի վարչական շրջանում նոր կոյուղագծերի, հեղեղատարերի կառուցման և գործող ցանցի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման տրամադրման աշխատանքներ | Նոր Արեշի 33-րդ փող. /կոյուղագիծ, Նոր Արեշի 34-րդ փող. /հեղեղատար/, Ավանեսով 3-րդ նրբ. /հ. 160 դպրոց/ /հեղեղատար/ | 1 | 1 | 04.09.2020թ. - 03.12.2020թ. | 04.09.2020թ. - 02.12.2020թ. |
| 3 | Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում նոր կոյուղագծերի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման տրամադրման աշխատանքներ | Ծերենցի 2-րդ նրբ. 19-27 տներ /կոյուղագիծ/, Ջիվանու փող. 20-54 առանձնատների համար /կոյուղագիծ/ | 1 | 1 | 04.09.2020թ. - 03.12.2020թ. | 04.09.2020թ. - 02.12.2020թ. |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 4 | Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում նոր կոյուղագծի, հեղեղատարի կառուցման և գործող ցանցի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման տրամադրման աշխատանքներ | Սարկավագի փողոց վերջնամաս Հաարության փող. 80տ. Դիմացից մինչև Միքայելյան հիվանդանոց /կոյուղատար, հեղեղատար/, Լեփսիուսի փողոց հհ27,37,39 /կոյուղատար | 1 | 1 | 04.09.2020թ. - 03.12.2020թ. | 04.09.2020թ. - 02.12.2020թ. |

Հիմք ընդունելով վերոգրյալը, տալիս եմ դրական եզրակացություն:

Գնման հայտը նախագծած ներկայացուցիչ ________________ Հ.Երզնկյան

14.12.2020թ.